

**ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

<b>Թեմա՝</b>	Շահան Շահնուրի գրական դիմանկարը. ուսուցման հարցեր
<b>Առարկա՝</b>	Հայոց լեզու և հայ գրականություն
<b>Հեղինակ՝</b>	Հասմիկ Մայիլյան
<b>Ուսումնական հաստատություն՝</b>	ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց

## Ներածություն

Թեմայի արդիականությունը: 1920-ական թվականներին Փարիզում իր գրական առաջին քայլերն անող հայազգի գրող Շահան Շահնուրը եկավ ահազանգելու, որ հայ գրականությունը, ստեղծվելով և զարգանալով օտարության մեջ, բռնել է «նահանջի» ուղին: Շահնուրը հարեց գրական այս նոր ուղղությանը և հակադրվեց Կարօսի շարժմանն ու ստեղծեց գրականություն, որը մերժեց «ազգային նահապետական ավանդույթները և փորձեց շարժվել եվրեպական գրականության թողած հետագծով՝ իր մեջ դեռևս պահելով ազգային գրական ժառանգության պատառիկներ:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում, որ Շահան Շահնուրի գրական դիմանկարին ծանոթանանալը հնարավորություն կտա պարզելու «նահանջի» առաջացման պատճառները, կկանխի շարժման զարգացումը և կփրկի գրականությունն ու առհասարակ մշակույթը ճուլումից:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության առարկան Շահան Շահնուրի գրական դիմանկարն ու ուսուցման խնդիրներն են: Նպատակն է սովորողին հաղորդակից դարձնել Շահնուրի թողած գրական ժառանգությանն ու ծանոթացնել նրա գրական դիմանկարին: Խնդիրներն են՝

1. Ցույց տալ Շահնուրի՝ գրականության մեջ կայացման ուղին:
2. Ներկայացնել նրա ստեղծագործություններում արձարձված խնդիրներն ու թեմաները:
3. Ցույց տալ Շահնուրի և արևելահայ հեղինակների գրական մոտեցումների հակադրություններն ու նմանությունները:
4. Աշակերտներին մղել քննադատական մտածողության և սեփական կարծիքն ու տեսակետը հիմնավորելուն:

Բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է Ներածությունից, Շահնուրի գրական դիմանկարն եւ ուսուցման խնդիրները նորկայացնող հատվածից, Եզրակացությունից և Գրականության ցանկից:

## **Շահան Շահնուրի գրական դիմանկարը. ուսուցման հարցեր**

Շահան Շահնուրը (Շահնուր Քերեսթեճյան) ծնվել է 1903 թվականին Պոլսում (այժմ՝ Ստամբուլ): 1922թ.-ից սկիզբ առած հալածնքները ստիպում են Շահնուրի և նրա ընտանիքի նման Պոլսում մնացած շատ ու շատ հայերի արտագաղթել Պոլսից: Շահան Շահնուրը մեկնում է Փարիզ և սկսում օգրադվել լուսանկարչությամբ:

Երեսնական թվականներին նա ակտիվորեն մասնակցում է փարիզահայության գրական կյանքին, իր նման երիտասարդ մարդկանց հետ ստեղծում «Մենք» գրական խմբակցությունը, գրում այդ խմբակցության հայտարարության իր տարբերակը: «Մենք»-ի ուղղությունը թարմ հոսանք էր սփյուռքահայության գրական և հասարակական կյանքում: Մենքականները գրական երկերը գնահատում էին գրական բարձր չափանիշներով, կտրուկ մերժում կուսակցական մոտեցումները, առհասարակ քննադատաբար էին մոտենում ազգային կուսակցությունների գործունեությանը<sup>1</sup>:

Շահնուրը ակտիվ մասնակցություն է ունենում գրական կյանքին և անզիջում պայքար մղում իր գաղափարները չընդունողների ընդդիմախոսների մեծ համբավ ու ճանաչում ունեցող գրողների դեմ: Սակայն նա ծանր հիվանդանում է և ստիպված գամվում անկողնուն: Կյանքի այդ փուլում հեռանում է նաև հայկական գրական միջավայրից և սկսում ստեղծագործել ֆրանսերենով:

Կյանքի վերջին տարիներին դարձյալ վերադառնում է հայերենագրությանը՝ գրելով բազմաթիվ հոդվածներ ու հուշեր:

Շահան Շահնուրը վախճանվել է 1973 թ.-ին:

Շահան Շահնուրի գրական դիմանկարի ուսուցման հարցերը քննելու համար նախ պետք է անդրադառնալ նրա կյանքի առաջին տասնամյակի վերջի դեպքերին, երբ պատանի գրողը ստիպված էր թողնել հայրենի տունն ու հաստատվել Փարզում՝ փոփոխություն մտցնելով թե՛ իր բնակավայրի ու նոր հանգրվանի, թե՛ իր գրական հայացքների, թե՛ ստեղծագործելու լեզվի միջև:

---

<sup>1</sup> Եղիազարյան Ա., Հայ գրականություն, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանների համար, Երևան, 2023, էջ 49:

Այս տեղեկություններն անհարժեշտ են, որպեսզի հասկանանք վերջինիս գրական այս կամ այն ուղղությանը հարելու և գրական ու պատկերային նոր գաղափարներ և ուղղություն ստեղծելու պատճառները:

Շահան Շահնուրը իր վեպով («Նահանջը առանց երգի») սկիզբ դրեց նահանջի գականությանը՝ ազդարարելով, որ ձևավորվում է օտարության մեջ ապրող հայ մտավորականության մի սերունդ, որը հեռանում է, հեշտությամբ նահանջում սեփական արմատներից ու ինքնությունից և բռնում ձուլման ուղին՝ մտածելակերպով ու գրելաոճով նմանվելով այն երկրի մշակույթին, սովորույթներին, որտեղ ապաստանել է:

Շահնուրը նույնպես տրվեց նահանջին և կյանքի որոշակի հատվածում սկսեց ստեղծագործել ֆրանսերենով (նա այդպես էլ հայերենով չգրեց չափածո ստեղծագործություններ և այդ ժանրը վերապահեց միայն ֆրանսերենին («Կրակ կրակի դեմ», «Ոչնչի որոնումը», «Ծպտյալ ճամփորդը» և այլն)): 40-60-ական թվականները ստեղծեցին առեղծվածային համբավ Շահնուրի անվան շուրջ ֆրանսիական գրական շրջանակներում, և եթե բանաստեղծություններին գումարենք նաև ֆրանսերենով գրված նրա երկու արձակ գործերը («Գիշերային տեղափոխություն», «Ողջ Թրաֆալգարը») կամբողջացնենք նրա՝ որպես ֆրանսիական գրողի գրական դիմանկարը:

1955 թվականին Շահնուրի ֆրանսերենով գրված գործերը նրա ֆրանսիացի ընկերները ներկայացրին Նոբելյան մրցանակի:

Ֆրանսերենով և ֆրանսիացի ընթերցողի համար գրած ստեղծագործությունները գրողը ստորագրում էր Արմեն Լյուբեն անունով: Շահնուրը գտնում էր, որ ինքը ֆրանսիական գրականության պարտեզ սողոսկած գող է (որպես ծածկանվան հիմք հեղինակը վերցրել է ֆրանսիական ամենահայտի գողի՝ Արսեն Լյուբենի անվան հայկականացված տարբերակը), ով մտել է ուրիշի պարտեզ ոչ միայն վարդեր գողանալու համար, այլև տնկելու և դրանով իսկ հարստացելու ֆրանսիական գրականությունը նոր շնչով:

Աշակերտներին Շահնուրի ստեղծագործություններին ծանոթացնելուց, դրանց թեմաներին և գրական ուղղությանը հաղորդակից դարձնելուց առաջ պետք է նրանց հիմնովին ծանոթացնել նրա կենսագրական մանրամասներին, կայացրած որոշումներին, կատարած ընրությանը՝ արևմտահայերով թե ֆրանսերենով գրելուն, ու դրանով լուծել նրա գրական դիմանկարի ուսուցման խնդիրները: Դասը կարելի է սկել «Մտագրոհ»

մեթոդի միջոցով աշակերտներին նախապատրաստելով թեմային: Ուսուցիչը կարող է հարցերի միջոցով աշակերտներին հիշեցնել պատմական անցքերն ու իրադարձությունները, հարցերով վեր հանել Ցեղասպանության թողած ազդեցությունը, հայի, հայության և հայ մշակույթին կյանքի վրա և ապա նոր անդրադառնալ Շահան Շահնուրի կայնքին ու նրա ստեղծագործությանը:

«Դասախոսություն» մեթոդի միջոցով կարելի է ներկայացնել Շահան Շահնուրի կյանքն ու հասարակական ու մշակութային գործունեությունը, որոնք ներկայացված են վեկում:

Դասախոսությունը ուսուցման ավանդական և հաճախ կիրառվող մեթոդներից է: Չնայած ժամանակակից մեթոդների բազմազանությանը՝ այսօր էլ դասախոսությունն է ձևավորում նյութի փոխանցման ակտիվ ձևերի հիմքը: Դասախոսությունը մենախոսություն է, այն տեղեկատվության, հաղորդվող նյութի բանավոր ներկայացումն է դասախոսի, ուսուցչի կողմից: Դասախոսությունը պասիվ գործընթաց է: Դասախոսության տևողությունը պետք է համապատասխանի ունկնդիրների ուշադրության կենտրոնացմանը՝ մոտավորապես 20 րոպե:

Կյանքի և մշակութային գործունեության հարցերը քննարկելուց հետո արդեն կարելի է անցում կատարել վերջինիս գրական գործունեությանն ու ստեղծագործությունների ուսումնասիրությանը:

Իր կենդանության օրոք Շահան Շահնուրը հրապարակել է բազմաթիվ ժողովածուներ ու ստեղծագործություններ: Դրանց մեջ առաջինը «Նահանջը առանց երգի» վեպն է, որը լույս է տեսել 1929 թվականին, սրան հաջորդում են «Հարալեզներուն դավաճանությունը» ժողովածուն (1933 թվական), հետագա տարիներին էլ տպագրվում են «Բաց տոմար»-ը (1967), «Կրակը կողքիս»-ը, «Զույգ մը կարմիր տետրակներ»-ը և այլն:

Իր ստեղծագործություններում ֆրանսահայ գրողը ցանկանում էր գերիրապաշտ մոտացման միջոցով ընդգծել, որ հայ գրականությունը ապրում է ազգային ավանդույթներից հեռանալու շարունակական շրջան: Այս հարցը անսահման անհանգստացրել է Շահնուրին և մտորումների առիթ տվել ու բազմիցս արտացոլվել նրա ստեղծագործություններում: Այդպիսի օրինակներ են ծրագրային «Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքը և «Նահանջը առանց երգի» վեպը:

Այս ստեղծագործություններից յուրաքանչյուրը թե՛ իր արտահայտած գաղափարով, թե՛ բովանդակությամբ գրողի մտորումների ու նրա գրական դիմանկարի անբաժանելի մասն է:

Շահան Շահնուրը իր պատմվածներում փոխում է հայ իրականության մեջ պատմվածքի ընդունված կառուցվածքայնությունը: Հայ գրականության մեջ պատմվածներում միշտ ներկայացվել է կերպարի կյանքի կուլմինացիոն հատվածը, նրա կյանքի ամենանշանակալի իրադարձությունը, որից հետո հերոսները սովորաբար մահացել են: Շահնուրը առաջարկում է պատմվածքի ստեղծման այլ մոդել, երբ պատմվածքի նյութ կարող է ծառայել կերպարի կյանքի յուրաքանչյուր դրվագ: Նա չի մերժում կուլմինացիոն իրադարձության ազդեցությունը կերպարի կյանքում ու չի անտեսում դրա թողած հետևանքները: Ստեղծագործության մեջ ներկայացվում է կերպարը, տրվում է նրա բնութագիրը, ապա ներկայացվում է «ճակատագրական դեպքը», որի արդյունքում կերպարը կրում է գաղափարական փոփոխություններ կամ արմատացնում արդեն իսկ ներկայացված գաղափարականությունը, և կերպարը շարունակում է ապրել:

Այս մոտեցմամբ կարելի է համեմատել Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի հերոս Լևոնին և Շահնուրի «Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքի հերոս Եպրաքսե հանրմին՝ հակադրությունները ներկայացնելով t-աձև աղյուսակի կամ Վեննի դիագրամի տեսքով՝ աշակերտներին առաջադրելով առաջին դեպքում առանձնացնել պատմվածքների առանձնահատկություններն ու գաղափարական, սյուժետային տարբերությունները, իսկ երկրորդ դեպքում տարբերությունների կողքին ներկայացնել նաև նմանություններն ու ընդհանրությունները:

«Հարալեզներուն դավաճանությունը» ժողովածուն լույս է տեսել 1933 թվականին և արժարժում է գերխնդիր դարձած դավաճանության ու նահանջի հարցը: Ժողովածուն հեղինակն անվանել է պատմվածքներից մեկի վերնագրով:

«Հարալեզներուն դավաճանությունը» ժողովածուի պատմվածքները միագիծ չեն: Շահնուրն այստեղ երբեմն ծիծաղում է իր հերոսների վրա («Հոսանքին եզրը», մասամբ՝ «Առավոտյան շեփոր»), երևան հանում բախտի քմահաճույքով Պոլսից Փարիզ նետված հայի ողբերգազավեշտական վիճակը («Դերձակ մը, իր երկու հյուրերը և զանազան դեպքեր») և, ընդհանրապես, Պոլսի և Փարիզի հայ մարդկանց ներկայացնում

է առանց գունագարդման ու լուսապսակի: Տարագիր հայության բախտի թեման է արծարծված «Պճեղ մը անուշ սիրտ պատմվածքում»<sup>2</sup>:

«Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքը սկսվում է հետևյալ կերպ. «Խոշոր ծրար մը թևին տակ դրած բարձրացավ 89 թիվ հանրակառքը, որ օթել տը Վիլեն մեկնելով կերթա մինչև Կլամար»<sup>3</sup>:

Եպրաքս հանրմը բարձրանում է ու նստում մի երիտասարդի կողքին, որը նույնպես հայ էր, և սկսում է պատմել իր որդիների, քաղաքային կյանքի դժվարությունների մասին, բողոքում է, որ անգամ չի կարողանում տնային գործերն անել. անգամ գորգը թափ տալ չի կարողանում: Պատմելու ընթացքում նկատում է, որ տղայի տկար լինելը և հարձուփորձ է անում նրա առողջությունից ու օգնություն առաջարկում: Նրանք իջնում են միևնույն կայարանում: Տղան խնդրում է նամակը փոխանցել փողոցի ծայրում գտնվող իջևանատան տիրոջը, ինչն էլ անում է Եպրաքսե հանրմը:

Նամակից պարզ է դառնում, որ տղան՝ Ռուպերը (Նորայր Կարապետյան) պատրաստվում է ինքնասպանություն գործել: Իջևանատան տերը խնդրում է Եպրաքսե հնրմին սպասել Նորայրի սենյակում, իսկ ինքն ու ոստիկանը գնում են փնտրելու տղային, սակայն ապարդյուն:

Նորայրը նմակով իր ողջ ունեցվածքը կտակել էր Եպրաքսե հանրմին: Վերջինս էլ որոշում է նրա նոր հագուստը տալ աղքատներին:

Նորայրի սենյակում Եպրաքսե հանրմը վերջապես կարողանում է թափ տալ գորգը, որովհետև պատուհանը բակի կողմ: Առտնին գործերին սովոր հայ կինոջ հոգսերին գումարվում է օտարության մեջ հանդիպած հայ տղայի ողբերգական ճակատագիրը .. Լայնածալ կինը սեւ ծրար մը ունի թեփն տակ: Ջղագրգիռ գնացքով կ'երթայ ան փողոցին ծայրը եւ հոն կը կենայ: Հոն կը կենայ ու յետոյ կը վերադառնայ: Այս երրորդ անգամն է, որ կինը կ'երթուդարձէ: Կը մօտենայ մարմար դուռով եւ ոսկեզօծ տառերով պանդոկին, կարծես ներսը մտնելու հաստա՛տ, անխախտելի՛ որոշումով, բայց կը

---

<sup>2</sup> Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ., Հայ գրականություն, Հանրակրթական դպրոցի 12-րդ դասագիրք, Երևան, 2023, էջ 27:

<sup>3</sup> Digilib.aua.am, Յարալեզներուն դաւաճանութիւնը, Պճեղ մը անոյշ սիրտ:

վարանի, քիչ յետոյ հեռանալու համար աճապարանօք: Ծրարը կը բանայ, կը նայի սպիտակ բանի մը եւ անհասկնալի բաներ կը բացականչէ: Բայց մանաւանդ ձեռքը կը զարնէ գլխին, արագ եւ բազմաթիւ հարուածներով: Շուրջն ալ կը նայի կարծես օգնութիւն հայցելու պէս, բայց ոչ ոք օգնութեան չի հասնիր անոր՝ որ խեղճուկ մը կեցեր է պանդոկին դրան առջեւ, անոր՝ զոր ես կոչեցի Եպրաքսէ հանըմ, բայց դուն գիտես, ընթերցող, որ պճեղ մը անուշ սիրտ է :

Պատմվածքի ուսուցումը կարելի է իրականացնել «Խճանկար» մեթոդի

կիրառմամբ:

Այսպես՝

1. Անհրաժեշտ է պատմվածքը բաժանել առանձին հատվածների: Այս դեպքում՝ 1. Եպրաքսէ հանըմի և Նորայրի հանդիպումը, 2. Իջևանատանը տեղի ունեցող իրադարձությունները, 3. Նորայրի ինքնասպանության մասին իմանալն ու դրան հաջորդող դեպքերը:
2. Հաջորդ քայլը 3-4 հոգուց բաղկացած համագործակցային խմբեր ձևավորելն է: Խմբեր ձևավորելիս լավ կլինի, հաշվի առնել սովորողների հետաքրքրություններն ու ցանկությունները:
3. Համագործակցային խմբերում մասնակիցներին տրվում են համարներ՝ 1, 2, 3:
4. Նույն համարները կրող մասնակիցները միավորվում են նոր՝ «փորձագիտական» խմբերում: Յուրաքանչյուր «փորձագիտական» խումբ ստանում է առաջադրանքի իր հատվածը: Խմբային աշխատանքների ընթացքը կախված է հատվածի, նյութի կամ ուսումնասիրվող ոլորտի առանձնահատկություններից:
5. Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ աշակերտները վերադառնում են համագործակցային խմբ և հաշվետվություն են տալիս ուսումնասիրած նյութի մասին՝ հանդես գալով նաև ուսուցանողի, սովորեցնողի դերում.
  - ներկայացվում են խմբային քննարկումների, աշխատանքների արդյունքները,
  - աշակերտներն իրենց սովորածը սովորեցնում են միմյանց,
  - միավորվում ու ամբողջացնում են գիտելիքները:
6. Ամփոփիչ փուլն ամբողջանում է, երբ համագործակցային խմբերն ամբողջ դասարանին ներկայացնում են թեման՝ իրենց նախընտրած ձևով 2-3 րոպեի



ընթացքում: Ուսուցիչը թեմայի ամփոփման վերաբերյալ տարբեր հանձնարարություններ կարող է տալ՝

1. «Ո՞րն էր ամենակարևորը պատմվածքում»,
2. «Համառոտ ձևակերպեք պատմվածքի գլխավոր գաղափարը»և այլն:

Այս քայլը հնարավորություն է տալիս միևնույն նյութն ամփոփել և գնահատել տարբեր տեսանկյուններից և մի քանի անգամ:

Շահան Շահնուրի պատկանող հաջորդ ծրագրային հաջորդ ստեղծագործությունը «Նահանջը առանց երգի» վեպն է, որտեղ հեղինակը ներկայացրել է իր մտահոգությունն ու անհանգստությունը օտարության մեջ հայտնված հայ երիտասարդների ճակատագրի մասին՝ ներկայացնելով իրնքն իրեն:

Վեպում հեղինակը ներկայացնում է իր կարծիքն ու տեսակետը մյուս հանրաճանաչ հայ հեղինակների մասին:

«Դարասկզբի մեր ազգային գրողների շահնուրյան քննադատությունը մեծ թափով ծավալվեց 30-ական թթ.՝ «Մենք» հանդեսին անդամակցելու օրերից մինչև տասնամյակի վերջը, և գրողի հանդեպ թշնամաբար տրամադրեց ոչ միայն Փարիզի, այլև ողջ սփյուռքի գրական շրջանակներին: ... Ուշադիր ընթերցողը կնկատի փոքրաթիվ, բայց պերճախոս այն պարողիաները, որ «Նահանջի» հերոսի մտածումներում գործադրում է Շահնուրը Վարուժանի, Սիամանթոյի և անգամ Մեծարենցի պոեզիայի նկատմամբ: Քննադատության գլխավոր թիրախը, սակայն, վեպում Նարեկացին է<sup>4</sup>»:

«Նահանջը առանց երգի» վեպի ուսուցումը կարելի է իրականացնել մի քանի մեթոդով կամ եղանակով՝ ուշադրության արժանանցնելով վեպի տարբեր հատվածներ ու գաղափարներ: Կարելի է անդրադառնալ Շահնուրի՝ Նարեկացուն տրված բներոշման հետևյալ հատվածին. «Հայերը գիրք մը ունին: Անոնց ամենագեշ, զգվելի, ամենասխալ, վատառողջ և ամենեն ավելի անբարոյական գիրքն է ան—Նարեկը: Կամբաստանեմ զայն իբրև ամենամեծ թշնամին հայության, կամբաստանեմ այն թշվառականը որ անոր տողերը թքավ: Եվ ըսել թե որքան փառահեղ ճակատագիր մը ունեցավ այդ թունավորիչ հատորը: Հայերը զայն ընդունեցին, յուրացուցին, ընդգրկեցին: Ոչ մեկ սերրունդ չխորհեցավ զայն ջնջել, որովհետև անոր լեզվական և բանաստեղծական ինչ ինչ

<sup>4</sup> Շահնուր Շահան, Նահանջը առանց երգի, Երևան, 1994, էջ 20:

հատկություններեն խաբվելով ծածկված թույնը չնշմարեց: Ընդհակառակն փոխանցեցին որդիե որդի, արյունե արյուն, ու ան եկավ մինչև մեզ: Թունավորվեցանք, ազգովին թունավորվեցանք: Ահա թե ինչու պարտվածներ ենք: Պարտվածներ ենք, որովհետև այն վանականին հաշմանդամ հոգիին պես արհամարհեցինք և անգիտացանք գոյությունը մեր եսին, մեր ուժին, կամքին, ան հատականության.— չկովեցանք, չխածինք, չմաքառեցանք: Քրիստոնեական վարդապետության անոր սխալ ու թերի մեկնությունը ընդունելով եղանք անմտորեն կրավորական, համակերպող, աղերսարկու, անգիտակից: Մենք մեր անձեն դուրս չելանք, չունեցանք նպատակ. Խմբովին չսլացանք դեպի կարելիությունը անկարելիին և մեծ իտեալ մը մեզ բոլորս իր ճանկերուն մեջ չշաղկեց: Կամբաստանեմ այն թշվառականը որ...»<sup>5</sup>

Հատվածի շուրջ կարելի է կազմակերպել «Բանավեճ» (Ուսումնական **բանավեճը** (դիսկուսիա լատիներեն՝ discussio-հետազոտություն, քննարկում) մտքերի, դրույթների, կարծիքների նպատակաուղղված և որոշակիորեն կարգավորված փոխանակություն է՝ հանուն ճշմարտության որոնման: Պետք է նշել, որ աշակերտները այդ փոխանակության կազմակերպման մասնակիցներն են լինելու: Բանավեճի նպատակը ոչ այնքան սովորողների՝ միմյանց տրված հարցերի ու դրանց պատասխանների պարզ հերթագայությունն է, որքան խնդրո առարկա դարձած հիմնահարցի բուն քննարկումը:

Այս դեպքում բանավեճ կարելի է կազմակերպել «Գրական դատ» մեթոդի էլեմենտների համակցմամբ: Այսպես՝ ընտրում ենք աշակերտներից մեկին, որը ուսումնասիրել է վեպը և ամբողջությամբ ծանոթ է Շահնուրի գրական դիմանկարին: Նա դառնում է հեղինակի գաղափարների կրողն ու դրանց պաշտպանը և վեպում առկա փաստարկներով բանավիճում դասարանի հետ Նարեկացու մասին կարծիքի շրջանակներում: Բանավիճող դասարանը փաստարկներ է բերում՝ կապված Գր. Նարեկացու կյանքի ու նրա ստեղծագործության ազդեցության մասին հայ գրականության, մշակույթի և հայ անհատի կայացման հետ կապված:

## Եզրակացություն

<sup>5</sup> Շահնուր Շահան, Նահանջը առանց երգի, Երևան, 1994, էջ 148:

Շահան Շահնուրը զգայուն վերաբերմունք ունի իր սեփական ժողովրդի, նրա պատմության, անցյալի արժեքների նկատմամբ, և եթե անգամ սխալ կամ վիճելի գնահատական եր է տալիս մշակութային արժեքնորին ու գրողներին, բայց, այնուամենայնիվ, տեսնում ու ներկայացնում է նաև ազգային ձեռքբերումներն ու անժխտելի նվաճումները:

Շահնուրը, անգամ նահանջելով, պահպանում է ազգայինն ու հայրենասիրություն քարոզում՝ ցույց տալով օտարության մեջ հայտնված հայի նահանջը:

Ավագ դպրոցում աշակերտներ պարտադիր պետք է ծանոթանան Ֆիանսիայում գրակա լայնածավալ գործունեություն ծավալած իրենց հայրենակից գրողի կյանքին ու ստեղծագործությանը: Նրա տված բնորոշումների ու տեսակետի հիման վրա ներկայացնել սեփականն ու կարողանալ տարբերակել ազգային գրականության ու նահանջի գրականության տարբերություններն ու գաղափարական շերտերը:

Մեր աշխատանքում ներկայացրինք Շահան Շահնուրի գրական դիմանկարն ու ուսուցման խնդիրները և հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

1. Շահան Շահնուրը անջնջելի հետք է թողել թե՛ հայ և թե՛ ֆրանսիական գրականության մեջ:
2. Նրա ստեղծագործությունների ուսուցումը պետք է իրականացնել համեմատություններ անցկացնելով հայ դասակա գրողների ստեղծագործությունների միջև:
3. Ստեղծագործություններն ուսումնասիրելու ժամանակ չպետք է խուսափել անգերազանցելի համարվող հայ գրողների տևած շահնուրյան գնահատականները վեր հանելուց և դրանք քննարկելուց:
4. Թեմայի ուսուցումը առավել արդյունավետ է Շահնուրի գրական դիմանկարի համակողմանի ներկայացման և բնագրով ստեղծագործությունները ընթերցելու պարագայում:
5. Ուսուցումն առավել արդյունավետ է ավանդական և ժամանակակից մեթոդների համակցված օգտագործման դեպքում:

## **Օգտագործված գրականության ցանկ**

1. Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ., Հայ գրականություն, Հանրակրթական դպրոցի 12-րդ դասագիրք, Երևան, 2023, 224 էջ:
2. Եղիազարյան Ա., Հայ գրականություն, Դասագիրք ավագ դպրոցի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի 12-րդ դասարանների համար, Երևան, 2023, 184 էջ:
3. Շահնուր Շահան, Նահանջը առանց երգի, Երևան, 1994, 216 էջ:
4. Digilib.aua.am, Յարալեզներուն դաւաճանութիւնը, Պճեղ մը անոյշ սիրը: